



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

22, Երևան, 0025, Արվյան 52 • Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52 • 52 Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia
(+374 10) 52-24-58, (374 10) 54-38-99 (Fax), theology@ysu.am, www.yasu.am

№ _____ « ____ » _____ 2023

**Աստվածաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2023 թ. դեկտեմբերի
1-ի նիստի № 9 արձանագրություն
Օրակարգ**

1. Աստվածաբանության և Հայ Եկեղեցու պատմության ամբիոնի ասիստենտ ա . գ. թ. Դիանա Ստեփանի Ծաղիկյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը (զեկուցող՝ փիլ. գիտ. թեկն. , դոց. Պ. Ա. Բարսեղյան)։

2. Պ. գ. թ. , դոց. Նարինե Զորիկի Միրզոյանի «Ապագիտություն. գիտության նորահայտ սպառնալիքը» աշխատության հրատարակության երաշխավորման հարցը (զեկուցող՝ պատմ. գիտ. թեկն. , դոց. Ն. Զ. Միրզոյան)։

3. Ընթացիկ հարցեր:

Պրոֆեսորադասախոսական կազմից Ներկա էին՝ պ. գ. դ. , պրոֆ. Անուշավան Եսա. Ժամկոչյանը (խորհրդի նախագահ), պ. գ. թ. , դոց. Ա. Յ. Բալյանը (խորհրդի քարտուղար), պ. գ. դ. Հ. Վ. Հովհաննիսյանը, բ. գ. թ. , դոց. Ս. Վ. Հովհաննիսյանը, պ. գ. թ. , դոց. Ա. Է. Հովհաննիսյանը, փ. գ. դ. Հ. Հ. Քյոսեյանը, պ. գ. թ. , դոց. Ն. Զ. Միրզոյանը, ա. գ. թ. Դ. Ս. Ծաղիկյանը, ասիստենտ Վ. Վ. Խաչատրյանը, բ. գ. թ. Վ. Ս . Մարտիրոսյանը, պ. գ. դ. Հ. Գ. Ավետիսյանը, պ. գ. թ. , դոց. Ա. Հ. Հարությունյանը, դասախոս Հ. Հարությունյանը, պ. գ. թ. Լ. Ս. Թումանյանը:

Ուսանողներից ներկա էին՝ Ա. Թորոսյանը, Դ. Գրիգորյանը, Ս. Խալաթյանը, Ա. Քոչարյանը:

ԼՍԵՑԻՆ. – Աստվածաբանության և Հայ Եկեղեցու պատմության ամբիոնի դոցենտ պ. գ. թ. Ն. Զ. Միրզոյանի «Ապագիտություն. գիտության նորահայտ սպառնալիքը» աշխատության երաշխավորման հարցը (զեկուցող՝ պ. գ. թ. , դոց. Ն. Զ. Միրզոյան)։

Զեկուցողը՝ պ. գ. թ. , դոց. Ն. Զ. Միրզոյանը, նշեց, որ աշխատության հրատարակությունն անհրաժեշտ է գիտական ճշմարտության լուսաբանման համար՝ ելնելով նրանից, որ ներկայացված գիտական պատասխանը ներկայացնում է առաջնահերթ կանոնագիտության տիրույթում մեծանուն գիտնականների եզրակացությունները, գիտական տեսակետները: Աշխատության նպատակն է վերահաստատելու հատկապես նշված եզրակացությունների իրական

հեղինակներին, ովքեր նաև ԵՊՀ դասախոսներ են եղել: Գիտական անդրադարձը նպատակ ունի նաև կանխելու գիտական տիրույթում հակագիտական երևույթներով, անձնակենտրոն գնահատականներով և գիտականագերծ, գիտական բարեվարքության կանոններից դուրս հրապարակումները:

ԱՐՏԱՀԱՅՎԵՑԻՆ. – պ. գ. դ. , պրոֆ. **Անուշավան Եպս. Ժամկոչյանը**, փ. գ. թ. , դոց. **Պ. Ա. Բարսեղյանը**, փ. գ. դ. **Հ. Հ. Քյոսեյանը**, ասիստենտ **Վ. Վ. Խաչատրյանը**, պ. գ. թ. **Լ. Ս. Թումանյանը**:

Փ. գ. թ. , դոց. Պ. Ա. Բարսեղյանը ներկայացրեց աշխատության վերաբերյալ իր գրավոր գիտական կարծիքը և նշեց, որ պ. գ. թ. , դոց.Ն. Զ. Միրզոյանի ներկայացրած աշխատությունը գրված է գիտական պատշաճության սահմաններում, օժտված է գիտական խոսքի բարձրագույն հատկանիշներով և ծառայում է գիտության տիրույթում իր նպատակին: Միայն անհրաժեշտ է տեխնիկական թերացումների սրբագրում և որոշ հատվածների հակիրճ լուսաբանում: Ուստի, գեկուցողը նշեց, որ երաշխավորում է տպագրությունը:

Փ. գ. դ. Հ. Հ. Քյոսեյանը ներկայացրեց աշխատության վերաբերյալ իր գրավոր գիտական կարծիքը և նշեց, որ քննարկման առարկա աշխատությունը՝ պ. գ. թ. , դոց .Ն. Զ. Միրզոյանի գիտական անդրադարձը, վեր է հանում գիտական փաստարկներն ու հիմնավորումները և զուրկ է անձնային գնահատականներից ու վերլուծություններից: Ներկայացված հակափաստարկներն ու լուսանկարները գալիս են արձանագրելու և ապացուցելու, որ գիտականության հետ որևէ աղերս չունեցող անձնակենտրոն հրապարակումը, այն է՝ «Բանբեր Մատենադարանի» հանդեսի բանավեճ բաժնում տպագրված նյութը, զուրկ է ապացուցողականությունից, և ներկայացված պնդումները եսակենտրոն գնահատականներ են:

Բ.գ.թ., դոց. Մ.Վ. Հովհաննիսյանը ներկայացրեց իր կարծիքն աշխատության վերաբերյալ՝ մասնավորապես աշխատության գիտական լեզվի, ոճի և գիտական պատշաճության վերաբերյալ: Մ.Վ. Հովհաննիսյանը ևս նշեց, որ պ. գ. թ. , դոց.Ն. Զ. Միրզոյանի գիտական անդրադարձը ներկայացված է արժեքավոր գիտական փաստարկներով, հիմնավորումներով և գիտականահեն վերլուծություններով: Նա մասնավորապես շեշտեց, որ աշխատանքում առկա չեն անձնաթիրախ մեկնաբանություններ և նկատելի են միայն գիտական վերլուծություններն ու հիմնավորումները, ուստի, աշխատանքը երաշխավորվում է տպագրության:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Աստվածաբանության և Հայ Եկեղեցու պատմության ամբիոնի դոցենտ պ. գ. թ. Ն. Զ. Միրզոյանի «Ապագիտություն. գիտության նորահայտ սպառնալիքը» աշխատությունը երաշխավորել տպագրության: Առաջարկվեց տպագրությունից առաջ որոշակիացնել և փոփոխման ենթարկել վերնագիրը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

**Պ. Գ. Դ. , ՊՐՈՖ. ԱՆՈՒՇԱՎԱՆ ԵՊՍ.
ԺԱՄԿՈՉՅԱՆ**

Պ. Գ. Թ. , ԴՈՑ. Ա. Յ. ԲԱԼՅԱՆ